Ալեքսանդր Շիրվանզադե

Գերեզմանատանը

Զատիկը անցավ, նրան հետևեց մեռելոցը: Վերջինը ես ավելի եմ սիրում, քան առաջինը: Երկուշաբթի վաղ առավոտից ես սկսեցի թափառել Թիֆլիսի գերեզմանատանը, որ տեսնեմ ո՛վ ինչ ցավ ունե, ով ինչ անցյալ է հիշում և ով ում համար է հոգեհանգիստ կատարում:

Հաղորդում եմ ընթերցողներիս իմ տեսածները, «ֆոտոգրաֆիական ճշտությամբ արձանագրելով» բոլորը:

Առաջին գերեզմանատանը ես հանդիպեցի աշխույժ երիտասարդ Պետրոս Սիմոնյանցին, որ մի խումբ սևազգեստների հետ կանգնած էր մի գերեզմանի մոտ: Արժանապատիվ հայր Գեղամյանը հոգեհանգիստ էր կատարում երջանկահիշատակ «Մեղվի» հիշատակին: Տեսարանը սրտաշարժ էր: Տիրացու Գևո Գևոյիչը կրծքին ծեծում էր և գլխին հող ածում, աղաղակելով. «Վա՛յ ինձ, վա՛յ ինձ»: Ինքը պարոն Պետրոսը, այնքան վշտահար էր, որ նույնիսկ ուշադրություն չդարձրեց իր մոտ կանգնած հեռագիրներ ցրող հրեայի վրա, որ ձեռում բռնած էր Ղարսից մի սգալից հեռագիր: Մի փոքր հեռու Միքել Անջելլոյի հանճարեղ աշակերտ Զովանի Բաբայանի Պալատնյանոն, մի հնադարյան ասպետական շինել ուսերին գցած, նկարում էր հանդիսավոր տեսարանը: Նրա մոտ բացված էր մի քելեխի սեղան, որից Զովանի Բաբայանի Պալատնյանոն երբեմն հոտ էր քաշում: Թողի տեսարանը և հեռացա սրտամորմոք: Մի քանի քայլ չանցած՝ տեսա մի այլ խումբ, որ շրջապատած էր մի գերեզմանաքար: Վերջինի վրա գրված էր.«Ասա հանգչին ոսկերք անձնասպան «Փորձի»»: Տրտում դեմքով կանգնած էր հանգուցյալի մարդը, տիկին Մոմ բազոնի հետ

թև-թևի տված: Տիրացու Փիլիպոսը շարական էր կարդում: Հետո տիրացու Կոստոն մի երկար դամբանական ասաց, հիշելով, ի միջի այլոց, և իր հանգուցյալ ամուսնուն և աղաղակելով.«Վե՛ստիկ, Վե՛ստնիկ, ինչո՞ւ ես քեզ սպանեցի»: Կոստոյի խոսքը ընդհատեց տիրացու Փիլիպոսը, որը առաջ գալով ապլոմբով մի ճառ արտասանեց «Հաղագս ազատության մամուլի»՝ Այսմավուրքից և Մաշտոցից ցիտատներ բերելով: Վերջը նա հայտնեց, թե հոգեհանգստից հետո էդեն թատրոնում մի ներկայացում կտրվի, ուր նախկին «Փորձի» այժմյան ղեկավարը փորձեր պետք է անե միսս Աբբոտին հաղթելու: Իսկ տիրացու Կոստոն կներկայացնե «Եկեղեցական ծուխ և օպերետի կրթական ազդեցությունը» վերնագրով վոդևիլը, թարգմանություն Արդար Հովհաննիսյանի: Թողի այս տեսարանն էլ ու հեռացա և ի՛նչ տեսնեմ: Մի սևերես մարդ, մի մեծ գերեզմանաքարի վրա բարձրացած, ճառ էր ասում, բացատրելով, թե մեծ պասի օրերին ինչպես ինքը ձիթենու հատիկներ (զեյթուն) ուտելիս փորացավ է զգացել և ինչպես այդ փորացավից բարկացած նա ապտակել է իր ընկերակիցներից մեկին: «Պարոննե՛ր, պարոննե՛ր, երբեք չուտեք ձիթենու հատիկներ, եթե ոչ, մի օր դուք էլ ստիպված կլինեք ձեր ամենաթանկագին բանը թաղել հողում, ինչպես ես թաղեցի այս գերեզմանում»:

Ես չհետաքրքրվեցի իմանալ արդյոք ի՞նչ է թաղել այդ սևերեսը գերեզմանում: Ինձ համար ավելի հետաքրքրական էր մի ուրիշ տեսարան, որի հերոսն էր Կովկասյան հրապարակախոս, հանճարեղ ռազմագետ և հմուտ խոլերագետ Նիկոլայ Նիկոլաձեն: Նա վշտահար երեսը դեպի հյուսիս դարձրած էր և ձեռով ցույց էր տալիս մի գերեզմանաքար, որի վրա գրված էր ռուսերեն տառերով «Տեսություն» (Աբզոր): Նա աղոթում էր՝ գերեզմանի մեջ ամփոփվածի հոգու փրկության համար, նրա անչափ մեղքերին թողություն հայցելով և աղաղակելով. «Տեր, ներիր երիտասարդության սխալները»:

Այդ միջոցին ականջիս հասավ մի ձայն, որ գոչում էր, «Վրա՛լման, Վրա՛լման»: Ետ նայեցի և տեսա մի չաղ մորուքավոր մարդու, որ կանչում էր Վրալման ազգանունով մի սև մորուքավոր մարդու: Ծանոթ դեմքեր էին: Մոտեցա և ինչ տեսնեմ: «Լիստոկի» ամբողջ խմբագրությունը մաղթանք է կատարել տալիս, փոխանակ հոգեհանգստի: Հետաքրքրվեցի պատճառը իմանալ:

«Իսկույն կիմանաք, պատասխանեց մեկը, ցույց տալով Վրալմանին: Վերջինս մի ծառի վրա բարձրացած սկսեց խոսել. «Պարոններ, մենք այսօր փոխանակ հոգեհանգստի՝ մաղթանք ենք կատարելու, որովհետև «հոգի» չունենք, որին «հանգիստ» ցանկանանք, իսկ մաղթելու շատ բան ունենք: Մաղթենք, որ մեր բազմաչարչար Իովանեի մարմինը հանգիստ լինի»: Այդ միջոցին ներքևից մի ձայն լսվեց, որ աղաղակում էր.

«Երբե՛ք, երբե՛ք, վասնզի Իովանեի ջանը միայն գերեզմանում կհանգստանա»:

Ես Հեռացա: Այնուհետև ուրիշ շատ տեսարանների հանդիպեցի: Շարունակությունը եկող տարի: